ԱՆՆԿՎԱԾ ԽՈԳԻՆԵՐ՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐ

Փաստաթուղթը, որը բարոնուհին ներկայացրել է «Միջազգային քրիստոնեական համերաշխություն» կազմակերպությանը, ծնվել է Արցախի Դատի երկու նվիրյալների հանդիպումից: Ավա՛ղ, Մոնթեն այլևս չկա, բայց նրա անունը հավերժ կհիշվի արցախյան հարցի փարեգրության էջերում:

ՋԱՐՈՒԼԱՅՆ ՔՈՔՍ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Բարոնուհի Քոքս- Մայիսի 15-ին եղանք Մարտունիում և հանդիպեցինք Ղարաբաղյան զինված ուժերի այդ շրջանի հրամանատար Մոնթե Մելքոնյանին, որը գլխավորում էր ղարաբաղյան զորքերը Քելբաջարի ուղղությամբ: Այսպիսին է իրադարձությունների նրա մեկնաբանությունը՝ պատմական, ռազմական և մարդասիրական տեսանկյուններով:

ա) *Պատմական*

Քելբաջարի շրջանը պատմականորեն մտնում է Հին Հայաստանի կազմի մեջ. հնարյան եկեղեցիներն ու տաճարները հաստատի դարավոր ներկայության վառ վկայություններն են: Ադրբեջանին շրջանն անցել է համեմատաբար վերջերս, երբ Ստալինը ԽՍՀՄ-ի ներսում կամայականորեն վերածեց բազմաթիվ սահմաններ: Ադրբեջանցիների այն հայտարարությունը, իբր շրջանը երբեք «հայկական» չի եղել, բացահայտ սուտ է: Այդուհանդերձ, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իր տարածքն ընդլայնելու ոչ մի ցանկություն չունի: Միակ ցանկությունը խաղաղ ապրելն է: Ադրբեջանցիները Քելբաջարն օգտագործում էին որպես ռազմակայան՝ Լեռնային Ղարաբաղի քաղաքներն ու գյուղերը հրետակոծելու, ինչպես նաև Լաչինի միջանցքը շարունակաբար գրոհելու համար: Առանց այդ միջանցքի Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը սովի կմատնվի:

Ադրբեջանական կողմի ռազմական գործողությունների անցյալ տարվա ակտիվացումն ուներ «էծնիկ մաքրման» անսքող նպատակ. տեղահանել կամ սպանել հայերին: Իշխանության գալուց հետո, 1992 թ. հունիսի 12-ին, նախագահ Էլչիբեյն արել է հետևյալ հրապարակային հայտարարությունը. «Եթե երեք ամսվա ընթացքում Ղարաբաղը չմաքրվի հայերից, Ադրբեջանի ժողովուրդը կարող է ինձ կախաղան հանել Բաքվի կենտրոնական հրապարակում»:

բ) *Ռազմական*

Այս հայտարարությանը հետևեցին ադրբեջանցիների հարձակումները Շահումյանի և Մարտակերտի շրջանների ուղղությամբ, երբ եղան բազմաթիվ զոհեր խաղաղ բնակիչներից, իսկ մոտ 50000-ը՝ տեղահանվեց: Այդ հարձակումներից առաջ բնակչությունը ոչ մի նախազգուշացում չէր ստացել, նրանց հեռանալու համար միջանցք չէր բողնվել, և սարերով փախչող խաղաղ բնակիչները հրետակոծվել էին «Գրադ» կայանքներից: Թողնելով ամբողջ ունեցվածքը, մահից մազապուրծ մարդիկ գնացին գերբնակեցնելու առանց այդ էլ սովահար ու բարուքանդ Ստեփանակերտը: Իսկ նրանց, ովքեր չէին հասցրել փախչել, ադրբեջանցիները գազանաբար սպանել էին. դիակներից շատերը գլխատված ու անդամահատված էին:

Միջազգային հանրությունը չդատապարտեց ադրբեջանցիների այս հարձակումը խաղաղ բնակչության վրա, իսկ միջազգային կազմակերպությունները, ինչպես օրինակ ԱՄՆ-ի Փախստականների հարցերով զբաղվող Գերագույն Հանձնախումբը, օգնության չհասան:

Ադրբեջանցիների այս հարձակման համար և սեփական ռազմական գործողությունների համար պատասխանատվությունների անհամաչափությունը դառնությամբ էր գիտակցվում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից, քանի որ

ա) Քելբաջարի գրոհը անհրաժեշտ էր գոյատևելու համար. Քելբաջարն օգտագործվում էր Լեռնային Ղարաբաղի քաղաքներն ու գյուղերը հրետակոծելու, ինչպես նաև Լաչինի միջանցքի վրա անընդհատ գրոհներ կազմակերպելու համար: Անցյալ տարվա հոկտեմբերին ադրբեջանցիները արդեն գտնվում էին խճուղուց 2 կմ հեռավորության վրա և անընդմեջ հրետակոծում էին այն:

Ինչպես ասաց Մոնթե Մելքոնյանը, «Վտանգված էր Լեռնային Ղարաբաղի բուն գոյատևումը»:

բ) Միջազգային հանրությունը չընդունեց ու չգնահատեց ռազմական գործողությունների ժամանակ խաղաղ բնակչության նկատմամբ վերաբերմունքի տարբերությունը: Հակառակ ադրբեջանցիների, որոնք սպանում էին խաղաղ բնակիչներին, Լեռնային Ղարաբաղի հայերն արեցին ամեն ինչ՝ պահպանելու համար Քելբաջարի խաղաղ բնակիչների կյանքը: Վերջիններս նախազգուշացվել էին հարձակումից առաջ (թեև ռազմավարական տեսակետից դա ձեռնտու չէր հայերին) և նրանց հեռանալու համար միջանցք էր թողնվել:

Մարտի 27-ին Լեռնային Ղարաբաղի ուժերը երեք ուղղություններով գրոհեցին Քելբաջարը՝ մտնելով շրջանի տարածքը:

Մարտի 29-ին 8-ժամյա համառ մարտերից հետո հայերը գրավեցին ադրբեջանցիների ամրություններն ու հասան դեպի Լաչին տանող խճուղուն: Այստեղ հայերը կանգ առան՝ անվտանգ հեռանալու հնարավորություն տալով խաղաղ բնակչությանը: Դադարը տևեց 24 ժամ և թելադրված չէր ռազմավարական նպատակներով: Առաջխաղացումը վերսկսվեց. նորից հասնելով խճուղուն հայերը կանգ առան՝ տեսնելով մեծ խմբերով հեռացող ադրբեջանցի խաղաղ բնակիչներին: Այս երկրորդ դադարը տևեց 40 ժամ, թեև նույնպես չուներ ռազմավարական որևէ նպատակ: Իսկ ադրբեջանցիներն այդ ընթացքում անցկացրին 7 թեթև հրասայլ և բեռնատարներ՝ ուղղաթիռների ուղեկցությամբ:

Ադրբեջանցի հրամանատարին առաջարկվեց մինչև ապրիլի 2-ի ժամը 14-ը թողնել քաղաքը՝ երաշխավորելով անվտանգ անցումը:

Առաջարկը մերժվեց: Դրանից հետո հայերը բարձրախոսներով դիմեցին (ադրբեջաներեն և ռուսերեն) խաղաղ բնակչությանը և նրանց ժամանակ տրամադրեցին հեռանալու համար, քանի որ ռազմակայանը գտնվում էր քաղաքի կենտրոնում: Լեռնային Ղարաբաղի ուժերը գրոհը վերսկսեցին միայն 14.45-ին՝ 45 րոպե հավելյալ ժամանակ տալով խաղաղ բնակչությանը:

Հարձակումը պսակվեց հաջողությամբ զգալի վնաս հասցնելով ադրբեջանական բանակին:

գ) *Մարդասիրական*

Լեռնային Ղարաբաղի ուժերը արեցին ամեն բան՝ պահպանելու համար ադրբեջանցի խաղաղ բնակիչների կյանքը: Դրանք ցավում են այն բանի համար, որ զոհվել է 15 խաղաղ բնակիչ, սակայն վերջիններս գտնվել են դիրքերում և հնարավոր չէր տարբերակել նրանց:

Հայերն անընդհատ շեշտում են, որ ադրբեջանցիներից տարածքային ոչ մի պահանջ չունեն: Քելբաջարի գրավումը «պարտադրված էր» որպես գոյատևման միջոց, քանի որ այդտեղից հրետակոծվում էին ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպես էլ Հայաստանի սահմանամերձ շրջանների բնակավայրերը (օրինակ՝ Գորիսը), ինչպես նաև գերկարևոր Լաչինի միջանցքը:

Քանի դեռ միջազգային հանրությունը չի կարող երաշխավորել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգությունը, հնարավոր չի լինի հայկական զորքերը դուրս բերել Քելբաջարից: Չի բացառվում զորքերի մասնակի դուրսբերումը՝ որպես բարի կամեցողության նշան: